ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ԱՐՄԻՆԵ ԱՐՄԵՆԻ

ԽՈՍՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԹԵՐԶԱՐԳԱՑՈՒՄՈՎ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ՀԱՐՍՏԱՑՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՆԱԽԱՊԱՅՄԱՆ

ԺԳ.00.03- «Հատուկ մանկավարժություն» մասնագիտությամբ
մանկավարժական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՄԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2015

Ատենախոսության թեման հաստատվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Ս. Գ. Կարապետյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ Մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ռ. Ն. Ազարյան

Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Լ. Հ. Սարատիկյան

Առաջատար կազմակերպություն՝ Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կկայանա 2015թ. հուլիսի 2-ին՝ ժամը 12^{00}-ին, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի «Մանկավարժություն» 020 մասնագիտական խորհրդում:

Հասցե՝ 0010, ք. Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2015թ. հունիսի 2-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ Ա. Հ. Սվաջյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Երեխայի արդյունավետ ուսուցումը մեծապես պայմանավորված է դպրոցական ուսուցմանը նրա պատրաստվածությամբ, որը ենթադրում է նաև խոսքի զարգացման պատշաճ մակարդակ, ինչը մշտապես եղել է ընդհանուր և հատուկ մանկավարժության ուշադրության կենտրոնում: Խնդրո առարկայի շուրջ մասնագիտական գիտամեթոդական գրականության մեջ ներկայացված են մի շարք հետազոտություններ տարբեր տեսանկյուններով, դիտարկվել են հիմնախնդրի լուծման տարբեր ուղիներ, մշակվել են գիտելիքների յուրացման գործընթացն արդյունավետ դարձնելու և կրթության մակարդակը բարձրացնելու նպատակով բազմաթիվ մեթոդիկաներ (Ի. Ի. Բուդնիցկայա, Ա. Ա. Կատաևա,1985, Օ. Բ. Կոնևա, 2000, Ն. Վ. Նիժեգորոդցևա, 2001,Ա. Վ. Վյալիխ, 2005, Լ. Վ. Շարոխինա, 2009 և այլք):

Այս համատեքստում քննարկվող հիմնահարցն առավել արժևորվում է խոսքի ընդհանուր թերզարգացում ունեցող երեխաների կրթական գործընթացում, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ այս երեխաների խոսքի բաղադրամասերը լիարժեք ձևավորված չեն. խանգարված են խոսքի հնչյունավանկային, բառաքերականական կառույցները, թերզարգացած է հնչութային լսողությունը: Խոսքի բաղադրամասերի թերզարգացումը խոչընդոտում է ուսումնական գործընթացի արդյունավետ իրականացմանը (Վ. Կ. Վորոբյովա, 1967, Ն. Վ. Սերեբրյակովա, Լ. Գ. Պարամոնովա, 1986, Ս. Ն. Կոնովալովա, 2004, Ի. Յու. Կոնդրատենկո, 2005, Տ. Բ. Ֆիլիչևա, Գ. Վ. Չիրկինա, 2008, Ս. Գ. Կարապետյան, 2009 և այլք):

Հետազոտության արդիականությունը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ մասնագիտական գրականության մեջ առկա մի շարք ուսումնասիրությունները մեկնաբանում են խոսքի ընդհանուր թերզարգացում ունեցող երեխաների խոսքի ձևավորման առանձնահատկությունները, սակայն նրանց բառապաշարը գրեթե չի ուսումնասիրվել որպես ուսուցման գրավական, և բավարար չափով չեն լուսաբանված այն դժվարությունները, որոնք առկա են այս երեխաների ուսումնական գործընթացում՝ պայմանավորված բառապաշարում դրսևորվող խնդիրներով:

Հիմնախնդրի արդիականությունը հավաստում է նաև այն հանգամանքը, որ մայրենի լեզվով գրեթե բացակայում են խնդրո առարկայի շուրջ հետազոտություններ, խոսքի ընդհանուր թերզարգացում ունեցող երեխաների բառապաշարի ձևավորմանն ու զարգացմանն ուղղված հատուկ մշակված հանձնարարություններ, միջոցներ, մեթոդական մոտեցումներ:

Ուսումնասիրված չէ այդ երեխաների հետ աշխատող դաստիարակների և ուսուցիչների իրազեկվածությունը խնդրո առարկայի շուրջ, որոշված չէ բառապաշարի ձևավորման տեսանկյունից տվյալ թիրախային խմբի երեխաների ուսումնական ծրագրերի յուրացման արդյունավետության մակարդակը: Մեր հետազոտության թեման պայմանավորված է այդ խնդիրների լուծման անհրաժեշտությամբ: Հիմնախնդրի տեսականորեն և գործնականորեն ոչ լիարժեք մշակված լինելու փաստն է՛լ ավելի է ընդգծում սույն հետազոտության արդիականությունը, նրա տեսական, գործնական և սոցիալական նշանակությունը:

Հետազոտության նպատակը: Մշակել խոսքի ընդհանուր թերզարգացում (III մակարդակ) ունեցող երեխաների բառապաշարի հարստացմանը նպատակաուղղված մանկավարժական մեթոդներ և միջոցներ:

Հետազոտության օբյեկտը: Խոսքի ընդհանուր թերզարգացում (III մակարդակ) ունեցող 5-6 տարեկան երեխաների բառապաշարի հարստացման գործընթացն է:

Հետազոտության առարկան:Խոսքի ընդհանուր թերզարգացում ունեցող (III մակարդակ) երեխաների բառապաշարի հարստացման լոգոպեդական աշխատանքի բովանդակությունը,միջոցներն ու մեթոդները:

Հետազոտության վարկածը: Խոսքի ընդհանուր թերզարգացում ունեցող երեխաների (III մակարդակ) դպրոցական ուսուցման նախապատրաստման գործընթացը կլինի արդյունավետ, եթե բառապաշարի հարստացումն իրականացվի բառի նշանակության բաղադրիչների, բառաձևի կիրառման կարողության ձևավորման, հոմանիշ-հականիշ ընտրելու կարողության զարգացման, բառի բազմիմաստության ձևավորման, ընդհանրական հասկացությունների զարգացման, բառի փոխաբերական իմաստի ձևավորման, բառակազմական կարողությունների և բառի նպատակային կիրառման կարողության զարգացման ուղղություններով:

Այս դեպքում հնարավոր կլինի ստեղծել բառապաշարի հարստացման արդյունավետ կաղապար և մշակել ուսուցման նախապատրաստման լոգոպեդական աշխատանքի համակարգ:

Նպատակը, օբյեկտը, առարկան և վարկածը սահմանում են հետազոտության հետևյալ խնդիրները.

1.ուսումնասիրել և վերլուծել խնդրո առարկայի շուրջ մասնագիտական գիտամեթոդական գրականության մեջ բառապաշարի հարստացման վերաբերյալ առկա տեսություններն ու հայեցակարգային մոտեցումները,

2.ուսումնասիրել խոսքի ընդհանուր թերզարգացում ունեցող երեխաների բառապաշարի առանձնահատկությունները,

3.բացահայտել ուսումնական ծրագրերի յուրացման գործընթացում խոսքի ընդհանուր թերզարգացում ունեցող երեխաների բառապաշարի առանձնահատկությունները,

4.մշակել խոսքի ընդհանուր թերզարգացում ունեցող երեխաների բառապաշարի հարստացման մեթոդներ, միջոցներ և փորձարարությամբ հիմնավորել դրանց կիրառման արդյունավետությունը:

Հետազոտության համար մեթոդաբանական հիմք են հանդիսացել

բառի և բառապաշարի ձևավորման ուսումնասիրման հոգելեզվաբանական մոտեցումները (Ա.Ա. Լեոնտև,Ա. Ռ. Լուրիա, Ա. Մ. Շախնարովիչ,Դ. Ն. Շմելյով),

երեխայի զարգացման ընթացքում լեզվի նշանակության, խոսքի և հոգեկան այլ գործընթացների փոխկապվածության դրույթները, խոսքային գործունեության տեսությունները(Ա.Ա. Լեոնտև, Ա. Ռ. Լուրիա,),

գործողությունների և հասկացությունների փուլային ձևավորման տեսությունը(Պ. Յա. Գալպերին),

խոսքի խանգարում ունեցող երեխաների համակարգային ուսուցման և դաստիարակության մասին հայեցակարգը (Ռ. Ե. Լևինա, Տ. Բ. Ֆիլիչևա, Գ. Վ. Չիրկինա):

Առաջադրված խնդիրների լուծման նպատակով կիրառվել են հետազոտության հետևյալ **մեթոդները.**

●տեսական՝ հոգեբանամանկավարժական, մասնագիտական և մեթոդական գրականության, փորձարարական հետազոտության արդյունքների վերլուծություն, տվյալների համեմատում, ընդհանրացում, ամփոփում,

●էմպիրիկ՝ դիտում, զրույց, հարցում, անկետավորում, փորձարարական ուսուցում,

●վիճակագրական մեթոդներ՝ գիտափորձի արդյունքների համեմատական վերլուծություն և մաթեմատիկական մշակում:

Հետազոտության գիտական նորույթը.

●բացահայտվել են խոսքի ընդհանուր թերզարգացում ունեցող երեխաների մայրենի լեզվի բառապաշարի յուրացման առանձնահատկությունները,

●որոշվել է հիմնախնդրի վերաբերյալ նախադպրոցական և դպրոցական հաստատությունների դաստիարակների և ուսուցիչների իրազեկվածությունը,

●փորձարարությամբ ուսումնասիրվել և վերլուծվել է խոսքի ընդհանուր թերզարգացում ունեցող երեխաների կողմից ուսումնական

նյութի յուրացման գործընթացում դրսևորվող դժվարությունները՝ բառապաշարի ձևավորման տեսանկյունից,

●մշակվել և գործնականում ներդրվել են ուղիներ, միջոցներ, մեթոդներ և դրանց կիրառման մանկավարժական պայմաններ, որոնք նպաստում են խոսքի ընդհանուր թերզարգացում ունեցող երեխաների բառապաշարի հարստացմանը և արդյունքում՝ ուսումնական նյութի լիարժեք յուրացմանը,

●մշակվել են խոսքի ընդհանուր թերզարգացում ունեցող երեխաների բառապաշարի հարստացմանն ուղղված հայերեն լեզվով հատուկ խաղեր, վարժություններ, առաջադրանքներ, տեքստեր:

Հետազոտության տեսական նշանակությունը: Ուսումնասիրության արդյունքները հատուկ մանկավարժությունը կարող են հարստացնել խոսքի ընդհանուր թերզարգացում ունեցող երեխաների բառապաշարի զարգացման վերաբերյալ նոր մոտեցումներով: Տեսականորեն հիմնավորվել են խոսքի ընդհանուր թերզարգացում ունեցող երեխաների բառապաշարի հարստացման համար առաջարկված մանկավարժական մոտեցումները և դրանց կիրառման ուղիները:

Հետազոտության գործնական նշանակությունը որոշվել է խոսքի ընդհանուր թերզագացում ունեցող երեխաների բառապաշարի հարստացման միջոցների, հնարների, մեթոդների, մոտեցումների, ինչպես նաև մայրենի լեզվով կազմված խաղերի, առաջադրանքների, հանձնարարությունների, տեքստերի, հեքիաթների մշակմամբ, համակարգմամբ և գործնականում դրանց ներդրմամբ: Ատենախոսության նյութերն ու մեթոդական մոտեցումները կարող են օգտակար լինել նախադպրոցական և դպրոցական հաստատությունների մանկավարժների, լոգոպեդների, ծնողների, մանկավարժական բուհերի սկզբնական կրթության և հատուկ կրթության ֆակուլտետների ուսանողների և դասախոսների համար:

Պաշտպանությանը ներկայացվող հիմնական դրույթները

1.Խոսքի ընդհանուր թերզարգացում ունեցող երեխաների բառապաշարը բնութագրվում է որոշակի առանձնահատկություններով, որոնք դրսևորվում են բառերի սակավությամբ, դրանց նպատակային կիրառման դժվարություններով, բառակազմական կարողությունների և բառիմաստի ձևավորման խանգարումներով:

2.Խոսքի ընդհանուր թերզարգացում ունեցող երեխաների բառապաշարում առկա խնդիրները բազմազան դժվարություններ են առաջացնում ուսումնական նյութի յուրացման գործընթացում, ուստի անհրաժեշտություն է առաջանում մշակել բառապաշարի հարստացմանն ուղղված լոգոպեդական աշխատանքի համակարգ՝ հաշվի առնելով դրսևորվող դժվարությունները:

3.Խոսքի ընդհանուր թերզարգացում ունեցող երեխաների բառապաշարի հարստացմանը միտված լոգոպեդական աշխատանքի օրինակելի համակարգը, ներդրված մանկավարժական միջոցները, մեթոդները և առաջարկված մանկավարժական պայմանները նպաստում են բառապաշարի հարստացմանը և ուսումնական ծրագրի արդյունավետ յուրացմանը:

Հետազոտության արդյունքների հավաստիությունն ու հիմնավորվածությունն ապահովված են հետազոտվող քանակակազմի բավարար ծավալով, հետազոտության ժամանակակից մեթոդների գործածությամբ, փաստացի նյութի քանակական և որակական վերլուծությամբ, հետազոտության արդյունքներով և լոգոպեդական պրակտիկայում դրանց ներդրումով: Հետազոտության արդյունքների հավաստիությունն ու հիմնավորվածությունը որոշվում է նաև հեղինակի հրատարակումներով, ելույթներով և աշխատանքի արդյունքների լայն քննարկումներով:

Հետազոտության փորձաքննությունն ու ներդրումը: Հետազոտության արդյունքների պաշտոնական քննարկումն անցկացվել է Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հատուկ մանկավարժության (ներկայիս՝ լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի)ամբիոնի նիստերում, գիտամեթոդական կոնֆերանսներում (2010-2013թթ.), ինչպես նաև Երևան քաղաքի թիվ 103, 42 նախադպրոցական հաստատությունների և թիվ 60 հիմնական դպրոցի մանկավարժական խորհրդի նիստերում:

Ատենախոսության ծավալը և կառուցվածքը: Ատենախոսությունը շարադրված է համակարգչային շարվածքով՝ 141 էջով: Այն կազմված է ներածությունից, 3 գլխից, հետևություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից: Ատենախոսության բնագիրը պարունակում է 15 աղյուսակ, 16 տրամագիր, 3 հավելված:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորված է հետազոտության արդիականությունը, սահմանված են նպատակը, օբյեկտը, առարկան, խնդիրները, գիտական վարկածը, մեթոդաբանական հիմքերը, մեթոդները, գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, պաշտպանությանը ներկայացվող դրույթները:

Ատենախոսության **առաջին՝ «Հիմնախնդրի դրվածքը, հետազոտության խնդիրները, մեթոդները և կազմակերպումը»** խորագրով գլուխը կազմված է չորս ենթագլխից:

Առաջին՝ «**Ժամանակակից լեզվաբանական, հոգելեզվաբանական և լոգոպեդական տեսանկյունները բառի և բառապաշարի մասին**» ենթագլխում դիտարկվել և վերլուծվել են բառի և բառապաշարի մասին հիմնական տեսություններն ու հայեցակարգային մոտեցումները: Բազմաթիվ հետազոտություններով արժևորված է բառի հաղորդակցային և ճանաչողական արժեքը, վերլուծված է բառի նշանակությունը և ընդհանրացնող ֆունկցիան, ներկայացված է բառի և մտածողության սերտ կապը:

Համեմատական վերլուծության է ենթարկված բառապաշարի ձևավորումն ու զարգացումն օնտոգենեզի և դիզօնտոգենեզի տեսանկյունից:

Հաստատված է, որ ուսումնասիրվող հիմնահարցն արդիական է, ունի տեսագործնական և սոցիալական կարևոր նշանակություն, սակայն հատուկ մանկավարժության մեջ այն գրեթե ուսումնասիրված չէ դպրոցական ուսուցման համատեքստում:

Երկրորդ՝ «**Խոսքի ընդհանուր թերզարգացում ունեցող երեխաների բառապաշարի բնութագիրը**» ենթագլխում ներկայացված է «խոսքի ընդհանուր թերզարգացում» հասկացությունը, մեկնաբանված են դրա առաջացման պատճառները, ախտահարման մեխանիզմը, ուսումնասիրման հոգեբանամանկավարժան, հոգելեզվաբանական, ֆիզիոլոգիական, կլինիկական տեսանկյունները:

Հայտնի է, որ խոսքի ընդհանուր թերզարգացումը խոսքի համակարգային խանգարում է, որի ժամանակ տուժած է հաղորդակցման միջոցը. ձևավորված չեն խոսքի բաղադրամասերը: Շատ հեղինակներ, մեկնաբանելով խոսքի ընդհանուր թերզարգացումը՝ հիմնական խանգարում են համարում լեզվական ունակության անբավարար զարգացումը:

Մեր հետազոտության շրջանակներում վերլուծվել է խոսքի ընդհանուր թերզարգացման երրորդ մակարդակ ունեցող երեխաների խոսքի առանձնահատկությունները: Հաստատված է, որ այս երեխաներն ունեն կապակցված խոսք, սակայն խոսքի բաղադրամասերը լիարժեք ձևավորված չեն. բառապաշարն աղքատ է, բնորոշ են խոսքի հնչյունավանկային և քերականական կառույցի զարգացման մասնակի խանգարումներ, հնչութային գործընթացների անլիարժեքություն:

«**Դպրոցական ուսուցման նախապայմանների վերլուծությունը գիտամեթոդական գրականությունում**» խորագրով ենթագլխում բացահայտվում է բառապաշարի հարստացման և բառի իմաստի հստակեցման դերը երեխաների դպրոցական ուսուցման նախապատրաստման աշխատանքներում:Ներկայացված է, որ լեզվի բառային կողմի զարգացումը պարարտ հող է համարվում դպրոցականի

ճանաչողական ոլորտի զարգացման համար, հարուստ բառապաշարը դիտարկվում է որպես դպրոցական ծրագրերի արդյունավետ յուրացման գրավական: Բազմաթիվ հետազոտություններ փաստում են, որ երեխաների ուսուցման արդյունավետությունը մեծ չափով պայմանավորված է նաև կապակցված խոսքի զարգացման մակարդակով: Այս համատեքստում առավել է կարևորվում խոսքի ընդհանուր թերզարգացում ունեցող երեխաների դպրոցական ուսուցման նախապատրաստման գործընթացում բառապաշարի հարստացմանն ուղղված լոգոպեդական աշխատանքների հետևողական իրականացման անհրաժեշտությունը:

Առաջին գլխի **չորրորդ՝ «Հիմնախնդրի հիմնավորումը, խնդիրները, փուլերը և կազմակերպումը»** ենթագլխում ներկայացված են հետազոտության մասնավոր խնդիրները, մեթոդները և անցկացման փուլերը:

Մասնագիտական գիտամեթոդական գրականության տեսական վերլուծության արդյունքներն ընդհանրացնելով՝ պետք է նշել, որ խնդրո առարկայի շուրջ կան բազմաթիվ ուսումնասիրություններ, սակայն մեր կողմից հետազոտվող հիմնահարցը գրեթե չի ուսումնասիրվել, մասնավորապես շատ աղոտ է լուսաբանված, թե այս երեխաներն ինչպես են տիրապետում հայոց լեզվի օրինաչափություններին և նրանց բառապաշարի առանձնահատկություններն ինչպես են արտացոլվում ուսումնական ծրագրերի յուրացման գործընթացում:

Ըստ վերը շարադրվածի՝հիմնահարցը կարևորվում է խոսքի ընդհանուր թերզարգացում ունեցող (III մակարդակ՝ ըստ Ռ. Ե. Լևինայի) երեխաների բառապաշարի հարստացման մեթոդների, միջոցների, հնարների մշակմամբ, պայմանների ընտրությամբ, համակարգմամբ ու փորձարարական հիմնավորմամբ:

Ատենախոսության երկրորդ՝« Խոսքի ընդհանուր թերզարգացում ունեցող երեխաների բառապաշարի ձևավորման հետազոտումը» խորագրով գլուխը կազմված է երեք ենթագլխից:

Երկրորդ գլխի **առաջին՝ «Խոսքի ընդհանուր թերզարգացում ունեցող երեխաների ուսուցման առանձնահատկությունների վերաբերյալ մանկավարժների իրազեկվածության սոցիոլոգիական հետազոտություն»** ենթագլուխը նվիրված է հետազոտվող հարցի վերաբերյալ դաստիարակների, ուսուցիչների, լոգոպեդների իրազեկության ուսումնասիրմանը: Անկետավորում, հարցում և զրույց է անցկացվել, որին մասնակցել են 112 ուսուցիչ և նախադպրոցական հաստատությունների դաստիարակ, ինչպես նաև տարբեր հաստատություններում աշխատող 51 լոգոպեդ:

Սոցիարցման արդյունքները վկայում են, որ բոլոր

մասնակիցներն արժևորում են հարուստ բառապաշարը որպես գիտելիքների յուրացման գրավական: Այսպես՝ դաստիարակների 64.5%-ը և տարբեր հաստատություններում աշխատող մասնագետների 94.1%-ը նշում են, որ թիրախային խմբի երեխաներին դպրոցական ուսուցմանը նախապատրաստելու նպատակով անհրաժեշտ է մայրենի լեզվով մշակել բառապաշարի հարստացմանն ուղղված հատուկ հանձնարարություններ, վարժություններ, խաղեր, մեթոդական ուղեցույցներ:

Այս առումով մեզ հետաքրքրում էր նաև, թե խոսքի ընդհանուր թերզարգացում ունեցող երեխաների բառապաշարի առանձնահատկություններն ինչպես են դրսևորվում դպրոցական ուսուցման ընթացքում: Խնդրո առարկայի շուրջ սոցիարցման արդյունքում ուսուցիչների 85%-ը նշել է, որ շատ աշակերտներ ունեն բառապաշարի խնդիրներ, որոնք հատկապես արտահայտվում են ուսումնական նյութը պատմելիս, շարադրություն, փոխադրություն գրելիս՝ միտքը ստույգ արտահայտելու համար անհրաժեշտ բառեր ընտրելու դժվարություններով, 15%-ը նշում էր, որ բառապաշարում առկա խնդիրները դրսևորվում են նաև մաթեմատիկական առաջադրանքները կատարելիս. երեխաները դժվարանում են ստույգ ընկալել խնդրի պայմանները, պահանջը: Ուսուցիչների և դաստիարակների սոցիարցման արդյունքները փաստեցին, որ նրանց 81.2%-ը նշված դժվարությունները դիտարկում են որպես «ծուլության», կամ «ծնողների ոչ հետևողական վերաբերմունքի» արդյունք, ինչը փաստում է խնդրո առարկայի շուրջ ոչ բավարար իրազեկվածության մասին:

Այսպիսով՝ տվյալ հետազոտության արդյունքները թույլ են տալիս փաստելու, որ խոսքի ընդհանուր թերզարգացում ունեցող երեխաները մեծ դժվարություններ են ունենում ուսումնական ծրագիրը յուրացնելիս: Այդ իսկ պատճառով խոսքի ընդհանուր թերզարգացում ունեցող երեխաների բառապաշարի հարստացմանն ուղղված միջոցների, հնարների, մեթոդական մոտեցումների մշակումը կնպաստի հետագայում այս երեխաների դպրոցական ուսուցման արդյունավետության բարձրացմանը:

Ատենախոսության երկրորդ գլխի **երկրորդ՝ «Խոսքի ընդհանուր թերզարգացում ունեցող երեխաների բառապաշարի հետազոտումն ըստ բառաքերականական բաղադրամասի»** ենթագլխում ներկայացված են հաստատող գիտափորձի արդյունքները, վերլուծվել են խոսքի ընդհանուր թերզարգացում ունեցող երեխաների բառապաշարի առանձնահատկությունները:

Բառապաշարի հետազոտումը կատարվել է ըստ հետևյալ ուղղությունների՝ պասիվ և ակտիվ բառապաշարի, հոմանիշ-հականիշ ընտրելու կարողության, նախադասության մակարդակում բառաձևի կիրառման կարողության,բառի փոխաբերական իմաստի և ընդհանրական

հասկացությունների ձևավորվածության,կապակցված խոսքում բառապաշարի հետազոտում, որն իրականացվել է հետևյալ հանձնարարությունների միջոցով՝ պատմվածքի կազմում ըստ սյուժետային նկարի, նկարագրական պատմվածքի կազմում, պատմվածքի վերապատմում, ըստ իրադրության՝ երկխոսության ստեղծում, հանձնարարված թեմայի շրջանակներում պատմվածքի կազմում:

Մի շարք հավաստող փորձարարական հետազոտությունների մասնակցել են խոսքի ընդհանուր թերզարգացում ունեցող (III մակարդակ) 37 նախադպրոցական և 36-ական դպրոցական (I-III դասարանի աշակերտներ), ինչպես նաև նույն թվով և տարիքի խոսքի բնականոն զարգացում ունեցող երեխաներ՝ ստուգողական խմբում:

Հետազոտության արդյունքները գնահատվել են Տ. Ա. Ֆոտեկովայի, Տ. Վ. Ախուտինայի (2007) կողմից առաջարկված նիշային համակարգով՝ մասնակիորեն փոփոխելով գնահատման չափանիշները և համապատասխանեցնելով մեր հետազոտության ուղղվածությանը:

Հետազոտության արդյունքները վկայում են, որ խոսքի ընդհանուր թերզարգացում ունեցող երեխաների բառապաշարը բավարար զարգացած չէ. այսպես, ըստ ակտիվ բառապաշարի հետազոտության ցուցանիշների՝ առավելագույն «5» նիշ գրանցվել է փորձարարական խմբում ընդամենը 21.6%, մինչդեռ ստուգողական խմբում այդ ցուցանիշը կազմում է 94.6%, ինչը վկայում է փորձարարական խմբում աղքատ բառապաշարի, բառի ներմուծման և բառաձևի կիրառման էական դժվարությունների մասին (տրամագիր 1):



Տրամագիր 1 Խոսքի ընդհանուր թերզարգացում ունեցող երեխաների պասիվ և ակտիվ բառապաշարի հետազոտման ցուցանիշներ

Փորձարարական խմբի երեխաների 78.4%-ի մոտ գերակշռում էին բառերի փոխարինումները՝ բառի փոխարինում իրադրությամբ նման այլ բառով, առարկայի անվանման փոխարինում առարկայի մասի անվանումով և հակառակը, տվյալ բառի իմաստի ընդլայնում կամ

նեղացում, հականիշների ընտրության դեպքում՝ հականիշի փոխարինում ամբողջական բառակապակցությամբ, կամ հականիշի կազմում «չ» ժխտական մասնիկի ավելացմամբ: Առավելագույն դժվարություններ էին ի հայտ գալիս հոմանիշների և հատկապես՝ ընդհանրական ու փոխաբերական իմաստ ունեցող բառերի հետազոտության դեպքում: Արդյունքների վերլուծությունը վկայում է այն մասին, որ փորձարարական խմբում 91.9%-ի մոտ ընդհանրապես ձևավորված չէ բառի փոխաբերական իմաստը: Փորձարարական խմբի բառապաշարում նշված խնդիրներն ու առկա դժվարություններն իրենց արտացոլումն էին գտնում նրանց կապակցված խոսքի հետազոտված բոլոր ձևերում:

Ատենախոսության երկրորդ գլխի **երրորդ՝ «Խոսքի ընդհանուր թերզարգացում ունեցող դպրոցականների բառապաշարի հետազոտումն ուսումնական գործընթացում»** ենթագլխում ներկայացված և վերլուծված են բառապաշարի առանձնահատկություններն ուսումնական նյութի շրջանակներում: Ցույց է տրված, որ երեխաների բառապաշարում առկա խնդիրները կայուն ձևով պահպանվելով՝ դրսևորվում են նաև դպրոցում:

Այսպես, եթե նախադպրոցականների ակտիվ բառապաշարը հետազոտելիս առավելագույն ցուցանիշ գրանցվում էր 21.6%, ապա դպրոցականների մոտ այս ցուցանիշը հասել է մինչև 44.4%, ինչը վկայում է այն մասին, որ դպրոցական ուսուցման ազդեցությամբ որոշակիորեն հաղթահարվել են այս երեխաների մոտ առկա դժվարությունները, սակայն դեռևս աշակերտների 55.6%-ի մոտ բառապաշարում առկա խնդիրները կայուն բնույթ էին կրում՝ այս երեխաների մոտ գերակշռում էին բառերի իմաստային կիրառման սխալներ, փոխարինումներ, էական դժվարություններ էին նկատվում հոմանիշների, ընդհանրական ու փոխաբերական իմաստ ունեցող բառերի կիրառման դեպքում:

Բառապաշարում առկա խնդիրները ցայտուն կերպով արտահայտվում էին ուսումնական նյութի շրջանակներում՝ ուսումնական նյութը ըմբռնելիս և վերարտադրելիս: Հետազոտության արդյունքները փաստում են, որ հաճախ այս աշակերտները դժվարանում էին ըմբռնել ուսումնական նյութի այս կամ այն հատվածը, որի արդյունքում նկատվում էր բովանդակությունը վերարտադրելու բազմազան դժվարություններ՝ հաճախ «գրքային բառերով անգիր վերարտադրելու» միտում և այլն:

Ուսումնական նյութի շրջանակներում պատմելիս, վերապատմելիս խոսքի ընդհանուր թերզարգացում ունեցող դպրոցականների բառապաշարում առկա խնդիրները դրսևորվում էին՝ առարկայի անվանման փոխարինմամբ դերանունով, գործողության անվանման փոխարինմամբ անորոշ նշանակությամբ բայով, բառերի բացթողումներով և այլն: Նշված խնդիրները կայուն ձևով դրսևորվում էին ուսումնական նյութի յուրացման գործընթացում: Այսպիսով՝

հետազոտության արդյունքներն ակնառու փաստում են, որ խոսքի ընդհանուր թերզարգացում ունեցող երեխաներին դպրոցական ուսուցմանն արդյունավետ նախապատրաստելու նպատակով անհրաժեշտ է մշակել համապատասխան միջոցներ, մեթոդներ և դրանց կիրառման մանկավարժական մոտեցումներ:

Ատենախոսության **երրորդ՝ «Խոսքի ընդհանուր թերզարգացում ունեցող երեխաների բառապաշարի հարստացման ուղիները»** խորագրով գլուխը բաղկացած է երեք ենթագլխից:

«Խոսքի ընդհանուր թերզարգացում ունեցող երեխաների բառապաշարի հարստացման միջոցները և մեթոդները» և «Խոսքի ընդհանուր թերզարգացում ունեցող երեխաների բառապաշարի հարստացման լոգոպեդական աշխատանքի բնութագիրը» ենթագլուխներում բազմակողմանիորեն մեկնաբանված են խոսքի ընդհանուր թերզարգացում ունեցող երեխաների բառապաշարի հարստացման նպատակով մեր կողմից կիրառված մեթոդները և միջոցները:

Խոսքի ընդհանուր թերզարգացում ունեցող նախադպրոցականների բառապաշարի հարստացմանն ուղղված փորձարարական ուսուցման հիմքում ներդրվել է մեր կողմից մշակված լոգոպեդական աշխատանքի օրինակելի համակարգը, որտեղ կարևորվել է հատուկ ընտրված և համակարգված սկզբունքների հաշվառումը, բառային, զննական և գործնական մեթոդների զուգակցված կիրառումն ու լոգոպեդական աշխատանքի կազմակերպման ձևերի ընտրությունը: Ներկայացված է բառապաշարի հարստացմանն ուղղված լոգոպեդական աշխատանքի օրինակելի համակարգը, որը կազմվել է՝ հիմնվելով բառի և բառապաշարի ձևավորման լեզվաբանական և հոգելեզվաբանական պատկերացումներին, երեխայի խոսքի բնականոն զարգացման օրինաչափություններին, խոսքի և մյուս հոգեկան գործընթացների փոխկապվածության մոտեցումներին (գծապատկեր 1):

Երեխաների բառապաշարի հարստացումը կատարվել է հետևյալ ուղղություններով՝ լեզվի բառաքերականական միջոցների գործնական յուրացում, բառի նշանակության բաղադրիչների ձևավորում, բառի իմաստի հստակեցում, աշխատանք բազմիմաստ բառերի, հոմանիշների և հականիշների, փոխաբերական իմաստի ձևավորման շուրջ: Բառապաշարի հարստացման ընթացքում լոգոպեդական աշխատանքի տարբեր փուլերում մեր կողմից լուծվել են հետևյալ խնդիրները՝ նոր բառերի ներմուծում բառապաշար, ներմուծված բառաձևի կիրառում կապակցված խոսքի տարբեր ձևերում: Ներկայացված են այս խնդիրների լուծման նպատակով մեթոդներ, միջոցներ, սկզբունքներ, ուղղություններ:



Գծապատկեր 1. Խոսքի ընդհանուր թերզարգացում ունեցող երեխաների բառապաշարի հարստացման լոգոպեդական աշխատանքի օրինակելի համակարգ

Մեր կողմից ընտրված, մշակված և համակարգված միջոցների, պայմանների,մեթոդական մոտեցումների կիրառումը նպաստում է այս երեխաների բառապաշարի հարստացմանը, խոսքային և ընդհանուր ճանաչողական ակտիվության բարձրացմանը, ինչը հիմք է ծառայում դպրոցին նախապատրաստման գործընթացն առավել արդյունավետ դարձնելու համար:

Երրորդ՝ «Խոսքի ընդհանուր թերզարգացում ունեցող երեխաների բառապաշարի հարստացման համար առաջարկված միջոցների և մեթոդների արդյունավետության փորձարարական հիմնավորումը» ենթագլխում ներկայացված են միամյա փորձարարական ուսուցման արդյունքները, ցույց է տրված մեր կողմից առաջարկվող միջոցների, մեթոդների, հնարների, մանկավարժական մոտեցումների արդյունավետությունը: Փորձարարության արդյունքների վերլուծությունը փաստում է հետազոտվող երեխաների բառապաշարի հարստացման համար մեր կողմից առաջարկված մեթոդական մոտեցումների դրական ազդեցության մասին:

Անցկացված ուսումնասիրությունների արդյունքների վերլուծությունը վկայում է, որ եթե մինչ փորձարարական ուսուցումը ակտիվ բառապաշարի ուսումնասիրության ընթացքում խոսքի ընդհանուր թերզարգացում ունեցող երեխաների ընդամենը 21.6%-ի մոտ էր գրանցվել առավելագույն նիշ, ապա կազմակերպված լոգոպեդական, զարգացնող աշխատանքներից հետո երեխաների 91.9%-ը, լիարժեք հաղթահարել է բոլոր հանձնարարությունները:

Հաստատված է, որ փորձարարական խմբի երեխաների բառապաշարի զարգացումը ցայտուն կերպով դրսևորվում է նաև նրանց կապակցված խոսքում (աղյուսակ 1): Այսպես, օրինակ, սյուժետային նկարով պատմվածք կազմելիս մինչ փորձարարական ուսուցումը առավելագույն նիշ գրանցվել էր 24.3%, իսկ փորձարարական ուսուցման արդյունքում առավելագույն ցուցանիշը դարձել է 89.2%:

Հետազոտության արդյունքները փաստում են, որ փորձարարական ուսուցման արդյունքում թիրախային խմբի երեխաների կողմից կազմված պատմվածքները ծավալուն են, հիմնականում կազմված են 4-5 բառից բաղկացած ընդարձակ նախադասություններից, լիարժեք արտացոլում են սյուժետային նկարի բովանդակությունը: Կազմված պատմվածքներում երեխաների կողմից կիրառվում են ածականներ, համեմատություններ, ընդհանրական հասկացություններ, տարածական և պատճառահետևանքային հարաբերություններ, ինչպես նաև սակավաթիվ են բառերի փոխարինումները: Այս ամենը վկայում է փորձարարական խմբի երեխաների բառապաշարի էական հարստացման մասին, ինչն էլ դրսևորվում է կապակցված խոսքի հետազոտված բոլոր ձևերում:

Աղյուսակ 1

Խոսքի ընդհանուր թերզարգացում ունեցող երեխաների բառապաշարի հետազոտման ցուցանիշները կապակցված խոսքում

Փորձարկ-վողներ n=74	Առաջարկվող հանձնարարություններ	Հանձնարարությունների գնահատման սանդղակը					
		3 նիշ		2 նիշ		1 նիշ	
		Թիվ	%	թիվ	%	Թիվ	%
Փորձարա-րական խումբ n=37	Սյուժետային նկարով պատմված-քի կազմում մինչ փորձ. ուսուցում	9	24.3	21	56.8	7	18.9
	Փորձ.ուսուցումից հետո	33	89.2	4	10.9	---	----
	Նկարագրական պատմվածքի կազմում մինչ փորձ.ուսուցում	8	21.6	23	62.2	6	16.2
	Փորձ.ուսուցումից հետո	32	86.5	5	13.5	---	----
	Պատմվածքի վերապատմում մինչ փորձ.ուսուցում	6	16.2	24	64.9	7	18.9
	Փորձ.ուսուցումից հետո	32	86.5	5	13.5		
	Ըստ իրադրության՝ երկխոսության կազմում մինչ փորձ. ուսուցում	------	---	11	29.7	26	70.3
	Փորձ.ուսուցումից հետո	30	81.1	7	18.9	---	---
	Հանձնարարված թեմայով պատմվածքի կազմում մինչ փորձ. ուսուցում	----	----	9	24.3	28	75.7
	Փորձ.ուսուցումից հետո	27	73	10	27	---	---
Ստուգո-ղական խումբ n=37 (խոսքի բնականոն զարգացում ունեցող երեխաներ)	Սյուժետային նկարով պատմվածքի կազմում	34	91.9	3	8.1	---	---
	Նկարագրական պատմվածքի կազմում	33	89.2	4	10.8	---	---
	Պատմվածքի վերապատմում	33	89.2	4	10.8	---	---
	Ըստ իրադրության՝ երկխոսության կազմում	32	86.5	5	13.5	---	---
	Հանձնարարված թեմայով պատմվածքի կազմում	30	81.1	7	18.9	-	---

Մեր կողմից իրականացվել է նաև փորձարարական ուսուցմանը մասնակցած երեխաների դինամիկ հետազոտություն դպրոցում, որն իրականացվել է դասալսումների, ուսուցիչների հետ զրույցների միջոցով: Այս հետազոտության արդյունքները ևս փաստում են, որ ակնառու է նրանց կողմից ուսումնական նյութի արդյունավետ յուրացումը:

Այսպիսով՝ մեր կողմից իրականացված փորձարարության արդյունքները ապացուցեցին առաջադիր վարկածի հավաստիությունը և թույլ տվեցին կատարել հետևյալ **հետևությունները.**

1.Խոսքի ընդհանուր թերզարգացում ունեցող երեխաներին բնորոշ են բառապաշարի տարաբնույթ խանգարումներ, որը զգալիորեն դժվարացնում է նրանց դպրոցին նախապատրաստելու գործընթացը: Այս համատեքստում առավել կարևորվում է նրանց հետ իրականացվող լոգոպեդական աշխատանքի անհրաժեշտությունը, սակայն այս խնդրին ցայսօր պատշաճ ուշադրություն չի դարձվել: Գրեթե բացակայում են

մայրենի լեզվով մշակված հատուկ հանձնարարությունները, վարժությունները, տեքստերը՝ միտված այդ երեխաների բառապաշարի հարստացմանը: Նշված երեխաների հետ լոգոպեդական աշխատանքները պետք է իրականացվեն գիտական ուսումնասիրությունների և դրանցում կիրառվող ուղիների, միջոցների, մեթոդների փորձարարական հիմնավորման ճանապարհով:

2.Խնդրո առարկայի շուրջ սոցիարցման արդյունքները վկայում են, որ նախադպրոցական հաստատությունների դաստիարակների 66.1%ը և տարբեր հաստատություններում աշխատող մասնագետների 94.1%-ը դժվարանում են խոսքի ընդհանուր թերզարգացում ունեցող երեխաներին դպրոցին արդյունավետ նախապատրաստելու նպատակով բառապաշարի հարստացմանն ուղղված միջոցների, մեթոդների, ուղիների ընտրության մեջ: Նրանց կողմից կարևորվել է հատկապես մայրենի լեզվով հատուկ խաղերի, հանձնարարությունների, վարժությունների, տեքստերի մշակման անհրաժեշտությունը:

3.Ատենախոսության մեջ ներկայացված են նոր մոտեցումներ, որոնք միտված են խոսքի ընդհանուր թերզարգացում ունեցող երեխաների բառապաշարի հարստացման գործընթացի արդյունավետության բարձրացմանը: Կատարված գիտահետազոտական աշխատանքը թույլ է տալիս դրական գնահատել խոսքի ընդհանուր թերզարգացում ունեցող երեխաների հետ մեր կողմից կազմակերպված լոգոպեդական աշխատանքի ուղղությունները՝ պասիվ և ակտիվ բառապաշարի հարստացում, նախադասության մակարդակում և կապակցված խոսքում բառաձևի կիրառման կարողության զարգացում, բառի նշանակության բաղադրիչների ձևավորում և զարգացում, հոմանիշ-հականիշ ընտրելու կարողության զարգացում, բառի փոխաբերական իմաստի և ընդհանրական հասկացությունների ձևավորում:

Նշված ուղղություններով մշակված է լոգոպեդական աշխատանքի օրինակելի համակարգ, ներկայացված են վարժություններ, առաջադրանքներ, խաղեր, հանելուկներ, տեքստեր, հեքիաթներ և դրանց անցկացման մեթոդական մոտեցումներ: Ատենախոսության մեջ հիմնավորված է դրանց կիրառման լայն հնարավորությունը:

4.Փորձարարությունում ներդրված բառապաշարի հարստացման ուղղությամբ առաջարկվող մոտեցումները խոսքի ընդհանուր թերզարգացում ունեցող երեխաներին թույլ տվեցին ուսումնասիրվող բոլոր չափանիշներով հասնել դրական արդյունքի, ինչը հանարավորություն է տալիս հավաստելու մշակված լոգոպեդական աշխատանքի օրինակելի համակարգի արդյունավետությունը և կիրառելիությունը: Այսպես, ակտիվ բառապաշարի հետազոտության ընթացքում առավելագույն ցուցանիշ գրանցվել է երեխաների 91.9%-ի մոտ,

մինչդեռ մինչ փորձարարական ուսուցումը այս ցուցանիշը 21.6% էր, ցուցանիշների էական աճ է գրանցվել նաև կապակցված խոսքում բառերի նպատակային կիրառման հետազոտության արդյունքում, համապատասխանաբար՝ սյուժետային նկարով պատմվածք կազմելիս՝ առավելագույն ցուցանիշը 89.2% է, իսկ նկարագրական պատմվածք կազմելիս և պատմվածքը վերապատմելիս՝ 86.5% և այլն:

5.Մանկավարժական փորձարարությանը մասնակցած խոսքի ընդհանուր թերզարգացում ունեցող երեխաների դինամիկ հետազոտությունը դպրոցում ևս փաստում է, որ ակնառու է թիրախային խմբի աշակերտների կողմից ուսումնական նյութի լիարժեք յուրացումը և բառապաշարի հարստացման համար մեր կողմից առաջարկվող մանկավարժական միջոցների ու մեթոդների արդյունավետությունը:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ **հրատարակումներում.**

1.Կիրակոսյան Ա. Ա, Խոսքի դերը դպրոցական ուսուցման նախապատրաստման համակարգում, Մանկավարժական միտք, 2011թ, №3-4, էջ 281-287:

2.Կիրակոսյան Ա. Ա, Մանկավարժների իրազեկվածությունը խոսքի ընդհանուր թերզարգացումով երեխաների ուսուցման առանձնահատկությունների մասին, Մանկավարժական միտք, 2012թ, №3-4, էջ 181-185:

3.Կիրակոսյան Ա. Ա, Խոսքի ընդհանուր թերզարգացումով նախադպրոցականների կապակցված խոսքի առանձնահատկությունները, Մանկավարժություն, 2012թ, №8 էջ 58-64:

4. Киракосян А. А. Особенности употребления словаря у детей с общим недоразвитием речи в рамках учебного процесса//Современные проблемы психолого-педагогического сопровождения детства: Материалы IX Всероссийской научно-практической конференции /под редакцией Г. С. Чесноковой. //Новосибирск: Изд-во НГПУ, 2014, с 142-144.

5.Карапетян С. Г, Киракосян А. А. Методические подходы по развитию словаря у дошкольников с общим недоразвитием речи //Науковий Часопис серия 19 Выпуск 27, Киев, 2014, с. 68-71.

6.Կիրակոսյան Ա. Ա, Երեխայի բառապաշարի զարգացումը օնտոգենեզի և դիզօնտոգենեզի տեսանկյունից, Մանկավարժական միտք, 2014, №1-2, էջ 86-91:

7.Կարապետյան Ս. Գ., Կիրակոսյան Ա. Ա., Խոսքի ընդհանուր թերզարգացում ունեցող երեխաների բառապաշարի հարստացումը, ուսումնամեթոդական ձեռնարկ, Ե., 2014թ, 95 էջ:

8.Կիրակոսյան Ա. Ա, Խոսքի ընդհանուր թերզարգացումով նախադպրոցականների բառապաշարի հարստացմանն ուղղված լոգոպեդական աշխատանքի բնութագիրը, Մանկավարժական միտք, 2015, №1-2, էջ 259-267:

КИРАКОСЯН АРМИНЕ АРМЕНОВНА
ОБОГАЩЕНИЕ СЛОВАРНОГО ЗАПАСА У ДЕТЕЙ С ОБЩИМ НЕДОРАЗВИТИЕМ РЕЧИ КАК ПРЕДПОСЫЛКА ШКОЛЬНОГО ОБУЧЕНИЯ

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13.00.03 - „ Специальная педагогика". Защита диссертации состоится 02 июля 2015г. в 12^{00} часов на заседании специализированного совета 020 ВАК „Педагогика„ по присуждению ученых степеней при армянском государственном педагогическом университете им. Х.Абовяна по адресу: 375010,Ереван, ул.Тигран Меца,17.

РЕЗЮМЕ

Актуальность исследования. Эффективное обучение детей во многом зависит от их подготовки к школьному обучению, что подразумевает также соответствующий уровень развития речи. Данная проблема всегда была в центре внимания общей и специальной педагогики, однако отдельным аспектом не рассматривалась проблема обогащения словарного запаса у детей с общим недоразвитием речи как предпосылка к успешному обучению в школе.

Не изучены основные закономерности развития словарного запаса у армяноязычных детей с общим недоразвитием речи, не изучен уровень информированности учителей и воспитателей, работающих с этими детьми в аспекте рассматриваемой нами проблемы. Вместе с этим недостаточная теоретическая и практическая разработанность этой проблемы снижает эффективность подготовки детей с общим недоразвитием речи к школе. Следовательно, поиск и разработка эффективных путей, средств, методов и условий обогащения словарного запаса у детей с общим недоразвитием речи (III уровень) будет способствовать повышению эффективности проводимой логопедической работы и тем самим, усвоению учебных программ в школе. Изложенное дает нам право определить проблему исследования как весьма актуальную, имеющую важную теоретическую, практическую и социальную значимость.

Цель исследования: Разработать средства, методы логопедической работы для обогащения словарного запаса у детей с общим недоразвитием речи.

Задачи исследования:

- изучить и проанализировать в научно-методической специальной литературе концептуальные и теоретические подходы по проблеме обогащения словарного запаса у детей с общим недоразвитием речи,
- изучить особенности словарного запаса у детей с общим недоразвитием речи,
- выявить особенности словарного запаса у детей с общим

недоразвитием речи в процессе усвоения учебного материала школьной программы,

●разработать средства и методы обогащения словарного запаса у детей с общим недоразвитием речи и экспериментально обосновать их эффективность.

Научная новизна исследования:

●выявлены основные закономерности формирования словарного запаса армянского языка у детей с общим недоразвитием речи.

●экспериментально установлено влияние недоразвития словарного запаса у детей с общим недоразвитием речи на эффективность усвоения уебных программ.

●определен уровень информированности учителей и воспитателей дошкольных и школьных учреждений в аспекте рассматриваемой нами проблемы.

●разработаны содержание, средства, методы и определены педагогические условия их применения для обогащения словарного запаса у детей с общим недоразвитием речи.

●разработаны на армянском языке специальные игры, упражнения, задания, тексты по обогащению словарного запаса у детей с общим недоразвитием речи.

Теоретическая значимость исследования заключается в теоретическом обосновании эффективности применения рекомендованных средств и методов обогащения словарного запаса у детей с общим недоразвитием речи. Материалы диссертации дополнят специальную педагогику и логопедию новыми теоретическими сведениями.

Практическая значимость исследования состоит в разработке и внедрении в дошкольную практику нового методического подхода для обогащения словарного запаса у детей с общим недоразвитием речи. В результате проведенного исследования предложены средства, методы и педагогические подходы по отбору лексического материала, организации и проведению логопедической работы, направленной обогащению словарного запаса у детей с общим недоразвитием речи.

Структура диссертации. Диссертация состоит из введения, трех глав, заключения, списка использованной литературы, приложения. Общий объём диссертации составляет 141 компьютерных страниц и содержит 15 таблиц, 16 диаграмм и 3 приложения. По теме диссертации опубликовано 7 статей и учебно-методическое пособие.

ARMINE A. KIRAKOSYAN

ENRICHMENT OF VOCABULARY OF CHILDREN WITH GENERAL SPEECH UNDERDEVELOPMENT AS A PRECONDTITION FOR SCHOOL EDUCATION

The defence of the dissertation will take place on July 2, 2015, at 12;00
at the session of the Specialized Degree-awarding Council (Specialization area: Pedagogy (020))
of Higher Attestation Commission of the Republic of Armenia
at Khachatur Abovian Armenian State Pedagogical University
(address: 17 Tigran Mets ave., 0010 Yerevan, Republic of Armenia).

SUMMARY

The Relevance of the Research: The efficient study process of a child is mainly determined with the level of readiness to school study which supposes a proper level basic for school education. This issue has always been highlighted within both General and Special Pedagogy.

This subject matter discussed in this context becomes even more important in the educational process of children with general speech underdevelopment under the circumstance that, in this case, the sound-syllabic, lexico-grammatical structures of speech are disturbed, the sound perception is underdeveloped. This hinders the efficient acquisition of study programs. The relevance of the research is also supported by the fact that, though there are many studies in pertinent literature on the characteristics of the vocabulary of children with general speech underdevelopment, it has not been studied properly from the standpoint of basic stepping-stone prerequisite for school education. Hence, the difficulties in the study process of these children, determined with the problems of vocabulary have not found appropriate reflection yet. The fact that researches on this problem, specifically in the framework of elaborated assignments, means and methodological approaches aimed at the development of vocabulary of children with general speech underdevelopment have not been carried out as for the native language adds up even more the relevance to the significance of this investigation. The level of professional awareness of tutors and teachers working with these children with similar problems has not been covered either, consequently, the level of organization of the study process of children of this target group from the perspectives of vocabulary development is not defined yet.

The relevance of our research is settled also in a proper solution to these problems with pertinent theoretical, practical and social significance attributed.

The aim of the research is elaboration of pedagogical strategies, means and methods enabling the vocabulary development of preschool children with general speech underdevelopment.

Research problems are:

1.To study and analyze relevant theoretical and methodological theories and conceptual approaches about the vocabulary enrichment;

2.To study the vocabulary characteristics of children with general speech underdevelopment;

3.To reveal the manifestations of vocabulary characteristics of children with general speech underdevelopment;

4.To elaborate decent pedagogical means and strategies aimed at the enrichment of vocabulary of children with general speech underdevelopment, subsequently, providing experimentally justifications of the efficiency of educational and methodological toolkit proposed and applied.

The scientific novelty of the research:

- The characteristics of development of native language vocabulary studied in the focus group of children with general speech underdevelopment have discreetly been revealed;
- The influence of the vocabulary on the study process of children with general speech underdevelopment has been submitted to experimentally studies and analysis within the frames of "Native Language" (Armenian) school curriculum;
- The level of awareness of teachers and educators of preschool institutions and schools is determined with regard to issues studied by us;
- The means, strategies and methods and pedagogical presetting to be applied have found a systemized schematization and structuring aimed at the promotion of target-group children's vocabulary enrichment and eventual completion of respective educational outcomes;
- Special games, exercises, tasks, texts for vocabulary enrichment have been developed in the Armenian language for children with general speech underdevelopment.

The theoretical significance of the research: The results of the research can enrich Special Pedagogy with new approaches to the development of vocabulary of children with general speech underdevelopment. The pedagogical approaches and the ways of their application suggested for the vocabulary development in the targeted children's group with general speech underdevelopment are theoretically justified.

The practical significance of the research: The practical significance of the research consists in the respective means, strategies, methods, and approaches of vocabulary enrichment of children with general speech underdevelopment, as well as in the elaboration, systemization, and practical application of assignments, tasks, games and tales applicable for this purpose. The materials and methodological approaches of the dissertation might be.The materials and methodological approaches of the dissertation might be useful for teachers of faculties of "Preschool, Primary and Special Education" of pedagogical higher education institutions, in particular – for seminars and lectures of highly professional or deeply specialized scope.

The volume and structure of the paper: The dissertation is submitted on 141 computer printed pages. It consists of Introduction, three chapters, Bibliography, and Appendices. It comprises 15 tables, 16 pictures and 3 appendices.

Seven articles and one tutorial-methodological guidebook on the major issues discussed in the paper are published.